ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ /ՀԱՄԱԿԱԶՄԻ/ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

----------2018 թվականի N-----Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ /ՀԱՄԱԿԱԶՄԻ/ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավականի ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը `

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել.

1) Հայաստանի Հանրապետությունում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսավորվող ուսումնական

հաստատություններում ֆինանսավորման հիմքում դրվող սովորողների թիվը /համակազմը/՝ համաձայն Հավելված 1-ի:

2) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ուսումնական հաստատություններում ուսուցման ծառայություններից ստացվող եկամտի ճանաչման պահը՝ համաձայն Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2018 թվականի սեպտեմբերի մեկից հետո ծագող իրավահարաբերությունների վրա:

Հավելված 1

ՀՀ կառավարության--- ------2018թ.

N ---Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ /ՀԱՄԱԿԱԶՄԸ/

1. Սույն հավելվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսավորվող ուսումնական հաստատություններում ֆինանսավորման հիմքում դրվող սովորողների թիվը /համակազմը/ հասկացությունը:
2. Սովորողների փաստացի թիվը՝ դա ուսումնական հաստատությունում տվյալ կրթական ծրագրի սովորողների առկա թիվն է տվյալ ուսումնական տարվա սկզբին:
3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սովորողների միջին ամսական թիվը հաշվարկվում է հաշվետու ամսվա ընթացքում սովորողների փաստացի հաճախումների հանրագումարը բաժանելով հաշվետու ամսվա աշխատանքային օրերի թվի վրա:
4. Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների միջին տարեկան համակազմը առաջիկա բյուջետային տարվա համար սահմանվում է հետևյալ բանաձևով՝

$Ս_մ=(2*Ս_ս+Ս_վ)/3$

որտեղ Սմ-ն – սովորողների միջին տարեկան համակազմն է առաջիկա բյուջետային տարվա համար

$Ս_ս$-ն սովորողների թիվն է ընթացիկ բյուջետային տարվա սկզբում /հունվարի մեկ/, որը հավասարեցվում է ընթացիկ ուսումնական տարվա սկզբի փաստացի թվին

$Ս_վ$-ն նոր ուսումնական տարվա սկզբին սովորողների կանխատեսվող թիվն է:

5. Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների միջին տարեկան ճշտված համակազմը ընթացիկ բյուջետային տարվա համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$Ս_{մճ}=(2*Ս_ս+Ս_{վփ})/3$, որտեղ՝

$Ս_{մճ}$-ն – սովորողների միջին տարեկան ճշտված համակազմն է

$Ս_ս$-ն սովորողների փաստացի թիվն է բյուջետային տարվա սկզբում /հունվարի մեկ/

$Ս_{վփ}$-ն սովորողների փաստացի թիվն է տվյալ բյուջետային տարվա սեպտեմբերի հինգին:

6. Նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ սովորողների միջին տարեկան համակազմը բյուջետային տարվա սկզբում /հունվարի մեկ/ հաշվարկվում է՝

$Հ_{մտ} = Ս_{տս}-Ս_2*1/2+Ս_ը*1/3 - Ս_մ*3/5+ Ս_{գե}*1/3$, որտեղ՝

$Հ_{մտ}$ - սովորողների միջին տարեկան համակազմն է

$Ս_{տս}$ - տվյալ բյուջետային տարվա սկզբին սովորողների թիվն է

$Ս_2$ - տվյալ բյուջետային տարվա նախատեսվող շրջանավարտների թիվն է

$Ս_ը$ - տվյալ բյուջետային տարում նախատեսվող ընդունվողների թիվն է

$Ս_մ$ - սովորողների տարեկան /բուհից դուրս մնացածներ և ազատվածներ/ մաղումն է նախորդ բյուջետային տարվա ընթացքում

$Ս_{գե}$ – սովորողների՝ եկածների և գնացածների տարբերությունն է, /եկած ուսանողներ համարվում են այն ուսանողները, որոնք վերսկսում են ուսումնական հաստատությունում իրենց ուսումը, գնացած ուսանողներ համարվում են չհեռացված ուսանողները, որոնք այլ պատճառներով դադարում

են սովորել/ դրական լինելու դեպքում այն գումարվում է, բացասական լինելու դեպքում՝ հանվում:

1/2, 1/3 – տվյալ բյուջետային տարվա մեջ ուսումնական ամիսների մասնաբաժինն է:

3/5 – մաղումների՝ տարվա մեջ բաշխվածության վիճակագրական միջինն է:

7. Նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ սովորողների միջին տարեկան ճշտված համակազմը հաշվարկվում է հետևյալ հերթականությամբ՝

- յուրաքանչյուր ամիս հաշվարկվում է՝

$Ս_{ավ} = Ս_{աս}-Ս_2+Ս_ը-Ս_մ + Ս_{գե}$, որտեղ՝

$Ս_{ավ}$ - սովորողների թիվն է ամսվա վերջին

$Ս_{աս}$ - սովորողների թիվն է տվյալ ամսվա սկզբին

$Ս_2$ - փաստացի շրջանավարտների թիվն է

$Ս_ը$ - փաստացի ընդունվողների թիվն է

$Ս_մ$ – սովորողների մաղումն է

$Ս_{գե}$ – սովորողների՝ եկածների և գնացածների տարբերությունն է

- սովորողների միջին ամսական թիվը հաշվարկվում է՝

$Ս_{մա} = (Ս_{աս}+ Ս_{ավ})/2$

- սովորողների թվաքանակի միջին տարեկան թիվը /համակազմը/ հաշվարկվում է որպես բոլոր ամիսների սովորողների միջին ամսական թվաքանակի միջին թվաբանական:

8. Հանրակրթական, նախնական /արհեստագործական/, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում վճարովի ուսուցման մասով հաշվարկվում է.

- սովորողների միջին ամսական ցուցակային թիվը, որը նախորդ ամսվա առաջին օրվա և նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ

սովորողների փաստացի թվի միջին թվաբանականն է

- սովորողների միջին տարեկան ցուցակային թիվը, որը սովորողների միջին ամսական ցուցակային թվերի տարեկան հանրագումարի հարաբերությունն է 12-ի:

9. Եթե սովորողը հաջողությամբ հանձնել է ընդունելության քննությունները, սակայն անմիջապես դրանից հետո հարգելի պատճառով /զորակոչվել է բանակ կամ գտնվում է ֆիզ. արձակուրդում և այլն/ չի օգտվել ուսուցման ծառայություններից, ապա սովորողների միջին տարեկան համակազմի հաշվարկի մեջ նա չի ներառվում:

Հավելված 2

ՀՀ կառավարության--- ------2018թ.

N ---Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՏԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՊԱՀԻ ՄԱՍԻՆ

1. Սույն որոշման շրջանակում «ուսուցման ծառայություն» եզրույթը մեկնաբանվում է համաձայն «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, իսկ «ուսումնական հաստատություններ» համարվում են նույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված բոլոր հաստատությունները:
2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ուսումնական հաստատություններում ուսուցման ծառայությունների դիմաց ստացվող եկամտի ճանաչումն իրականացվում է ամսական հաշվեգրման եղանակով՝ բաժանելով եկամուտը ուսուցման ծառայության մատուցման այն ժամանակահատվածն ընդգրկող ամիսների /այդ թվում ոչ լրիվ ամիսները/ թվի վրա, որի համար հաշվարկվել է ուսուցման ծառայության արժեքը:
3. .Ուսուցման ծառայությունների ժամանակահատվածը հաշվարկվում է ուսումնական հաստատության կողմից հաստատված ուսումնական պլանի համաձայն՝ ներառյալ սովորողի արձակուրդի

ժամանակահատվածը: Եթե իրականացվող կրթական ծրագրի տևողությունը մեկ ուսումնական տարուց ավելի է, ապա յուրաքանչյուր ուսումնական տարվա համար նախատեսված ուսուցման ծառայության ժամանակահատվածը համարվում է 12 ամիս:

4. Սովորողների համար ուսուցման ծառայության ժամկետի հաշվարկը սկսվում է սովորողին հաստատության կողմից սահմանված ծառայությունների մատուցման մեկնարկով:
5. Եթե սովորողը ավարտում է ուսումնական գործընթացը ուսումնական պլանով հաստատված ժամկետից ավելի շուտ, ապա ուսումնական հաստատությունը շարունակում է ուսման վարձից բխող եկամտի ճանաչումը իրականացնել սույն հավելվածի 2-րդ կետին համաձայն՝ անկախ սովորողի վաղ ավարտելուց:
6. Եթե սովորողը դադարում է օգտվել ուսուցման ծառայություններից սահմանված ժամկետից ավելի վաղ, ապա ուսուցման ծառայության դիմաց ստացվելիք եկամուտն ամբողջովին հաշվեգրվում է սովորողի՝ ուսումը դադարեցնելու մասին համապատասխան իրավական ակտի /հրաման, որի հիման վրա անձն այլևս սովորող չի համարվում տվյալ հաստատությունում/ ուժի մեջ մտնելու ամսին: